ԻՐԱԶԵԿ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ • UNION OF INFORMED CITIZENS •

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2023

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Իրազեկ քաղաքացիների միավորում» խորհրդատվական հասարակական կազմակերպության (այսուհետև՝ Կազմակերպություն) նպատակն է հասարակության իրազեկումը և հանրության տեղեկացվածության մակարդակի բարձրացումը, հանրության մասնակցության խթանումը հանրային նշանակություն ունեցող ոլորտներում որոշումների կայացման գործընթացում, ինչպես նաև ժողովրդավարական արժեքների ու բարեփոխումների առաջմղումը: Մեր համոզմամբ՝ պետական և հանրային նշանակություն ունեցող ոլորտներում հանրության տեղեկացվածության մակարդակի բարձրացումը ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնական և անբաժանելի բաղադրիչն է:

«Իրազեկ քաղաքացիների միավորման» հետազոտություններն ու հրապարակումները վերաբերում են արտաքին քաղաքականությանն ու դրան առնչվող հարցերին, ժողովրդավարական արժեքներին, տնտեսությանը, անվտանգության ոլորտին, ընտրություններին, բարեփոխումներին, ինչպես նաև քաղաքացիների իրավունքներին:

Կազմակերպությունն աշխատանքներ է ձեռնարկում՝ ուղղված Հայաստանում լրագրողական դաշտի ունակությունների բարձրացմանը, ինչպես նաև իրականացնում է լրատվական գործունեություն՝ ապատեղեկատվության դեմ պայքարող «Փաստերի ստուգման հարթակի» (այսուհետև՝ Հարթակ) միջոցով:

«Իրազեկ քաղաքացիների միավորումն» իր գործընկերների հետ միասին ակտիվորեն ներգրավված է Հայաստանում ընտրությունների որակի բարձրացման գործընթացին՝ թե՛ դիտորդական առաքելության և թե՛ դրան նախորդող գործընթացների վրա ազդեցության միջոցով:

Կազմակերպությունն իր ակտիվ մասնակցությունն է ունենում մի շարք ժողովրդավարական բարեփոխումների առաջմղմանը, հանրության շրջանում դրանց պահանջի ձևավորմանը և փաստաթղթերի նախագծմանը:

Մենք չենք ներկայացնում որևէ քաղաքական կուսակցության կամ այլ խմբի շահեր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Անձնակազմ
- Գործընկերներ
- Գործունեություն
- Ֆինանսավորում

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ

Մուշեղյան Աշխեն
Գործադիր տնօրեն

Իոաննիսյան Դանիել
Ծրագրերի համակարգող

Ղազարյան Լիլիթ
Գործադիր օգնական

Աղաբեկյան Վաղարշ
Իրավապահ համակարգի փորձագետ

Սերգոյան Արտաշես
Հետազոտող / Բարեփոխումների խորհրդատու

Ավագիմյան Ռուզաննա
Ծրագրի պատասխանատու

Հարությունյան Շուշան
Թարգմանիչ / Կայքերի թողարկիչ

Գորոյան Քրիստինե
Թարգմանիչ

Պետրոսյան Փիրուզա
Ծրագրի օգնական և ֆոնդահայթայթման մասնագետ

Ղազարյան Սևադա
Լրագրող / Գնումների մոնիթորինգի մասնագետ

Ղուկասյան Վահե
Խմբագիր

Գրիգորյան Խորեն
Վիդեոմոնտաժող / օպերատոր

Մարտիրյան Մանե
Թվային մարքեթինգի մասնագետ

Գասոյան Գայանե
Սոցիալական մեդիայի կոնտենտի մասնագետ

Կարապետյան Հակոբ
Գլխավոր խմբագիր

Մանասյան Նանե
Լրագրող

Լազարյան Նելլի
Լրագրող

Ոսկանյան Լուսինե
Լրագրող

Մարտիրոսյան Նարեկ
Լրագրող

Կարապետյան Փայլակ
Հաշվապահ

ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ

The U.S. Embassy in Armenia

Freedom House

ԱՇԿԱՏ ԴԻՏՈՐԴ

Ժողովրդավարության զարգացման հիմնադրամ

NED National Endowment for Democracy
Supporting freedom around the world

UK International Development
Partnership | Progress | Prosperity

«ՓԱՍՏԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՐԹԱԿԻ» (FIP.AM) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

2023 թվականին «Փաստերի ստուգման հարթակը» շարունակեց իր գործունեությունը՝ պայքարելով ապատեղեկատվության, կեղծ ու մանիպուլյատիվ լուրերի դեմ: 2022-ի տարեվերջից ադրբեջանցի «էկոակտիվիստների» կողմից Լաչինի միջանցքի փակվելուն զուգահեռ, ադրբեջանական և ռուսական մեդիահարթակներից շարունակաբար կեղծ և մանիպուլյատիվ լուրեր էին հոսում՝ ուղղված հայաստանյան լսարանին: Այդ ապատեղեկատվություններն առավել ուժգնացան հատկապես սեպտեմբերի 19-ին ադրբեջանական զինուժի կողմից Լեռնային Ղարաբաղ ներխուժման և խաղաղ բնակչության նկատմամբ ռազմական ուժ կիրառելու, դրա հետևանքով Լեռնային Ղարաբաղի բնակչության ամբողջական տարհանման ժամանակ: Տարվա ընթացում FIP.am-ը բազմաթիվ հրապարակումներ է պատրաստել Լեռնային Ղարաբաղի շուրջ ծավալվող իրադարձությունների համատեքստում վերը նշված կեղծ և մանիպուլյատիվ տեղեկատվության վերաբերյալ:

Բացի փաստերի ստուգումից, Հարթակը շարունակել է հետաքննական լրագրության իր գործունեությունը՝ հրապարակելով տասնյակ հետաքննություններ, որոնք հանրության շրջանում լայն քննարկման առարկա են դարձել:

2023 թվականը նշանավորվեց նաև Երևան քաղաքի ավագանու ընտրություններով: Դրանց նախաշեմին «Փաստերի ստուգման հարթակի» հետաքննությունները ապացուցեցին, որ ի հեճուկս բազմաթիվ պնդումների՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը ինչպես Երևան քաղաքում, այնպես էլ մարզերում և խոշորացված համայնքներում օգտագործում է իր ձեռքի տակ եղած վարչական լծակները՝ իր թեկնածուի համար առավելագույն ձայներ ապահովելու նպատակով: Բացի վարչական ռեսուրսներից՝ ցույց տվեցինք, որ նախընտրական քարոզարշավից առաջ և դրա ընթացքում ա հակառակորդների սև PR-ի համար: Այդ հրապարակումներն են նաև հիմք հանդիսացել Freedom House միջազգային իրավապաշտպան կազմակերպության ամենամյա զեկույցում տեղ գտած՝ իշխանությունների կողմից վարչական ռեսուրսներ կիրառելու մասին հայտարարության համար:

«Փաստերի ստուգման հարթակը» շարունակել է գործել բազմակողմանիության և անաչառության իր որդեգրած սկզբունքի շրջանակներում՝ հրապարակումների օբյեկտիվի տակ պահելով ինչպես Հայաստանի իշխանության, այնպես էլ ընդդիմության ներկայացուցիչների հրապարակային հայտարարությունները և կոռուպցիոն ռիսկ պարունակող գործունեությունը:

Հարթակը փորձել է մեծացնել նյութերի հասանելիությունը՝ կատարված աշխատանքը ներկայացնելով տարբեր ձևաչափերով և խորագրերով: Մասնավորապես, հրապարակված հոդվածների մոտիվներով պատրաստվել են վիդեոռեպորտաժներ, բացատրական տեսանյութեր (էքսփլեյներներ), թողարկվել է FIP-փոդքասթը, որի ընթացքում թիմի անդամները ներկայացրել են այս կամ այն հոդվածի պատրաստման մանրամասները, թողարկվել է ամենշաբաթյա «Փաստաչափ» ամփոփիչ հաղորդումը, և այլն:Ավելացել է Հարթակի ճանաչելիությունը հանրության շրջանում, ինչի մասին վկայում են օգտատերերի կողմից պարբերաբար ստացվող նամակները՝ այս կամ այն նյութի վերաբերյալ իրենց կարծիքի արտահայտմամբ, ինչպես նաև փաստերը ստուգելու կամ տեղեկատվությունը ճշտելու առաջարկներով:

«Փաստերի ստուգման հարթակի» բազմաթիվ հրապարակումներ արտատպվել և վերահրապարակվել են տարբեր լրատվական կայքերի կողմից, մի շարք պաշտոնյաներ տարբեր ամբիոններից իրենց ելույթներում հղում են արել Հարթակի հրապարակած նյութերին, իսկ թիմի անդամները բազմիցս մասնակցել են տարբեր հաղորդումների և ռեպորտաժների, հանրային քննարկումների, հարցազրույցների և այլ ձևաչափերով իրենց կատարած աշխատանքի վերաբերյալ մեկնաբանություններ տվել տարբեր լրատվամիջոցների:

«Փաստերի ստուգման հարթակը» այս տարի ևս շարունակել է թողարկել շաբաթվա ֆեյքերի և հիմնական ապատեղեկատվության վերաբերյալ «Փաստաչափ» հաղորդաշարը:

Հարթակի մյուս նախաձեռնություններից է FIP Փոդքաստը, որի ընթացքում փաստեր ստուգողները ներկայացնում են իրենց կատարած հետաքրքրաշարժ հետաքննությունները:

ՀԱՆՐԱՀԱՎԱՔՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿ

2023 թ սկզբին Լաչինի միջանցքի արգելափակմամբ և սեպտեմբերին Արցախի ցավալի կորստի ու բնակչության բռնի տեղահանման պատճառով ընդդիմության կողմից կազմակերպվում էին բողոքի ակցիաներ: Միաժամանակ՝ Երևանի ավագանու ընտրությունների նախընտրական շրջանում նույնպես կազմակերպվել են հանրահավաքներ, այդ թվում՝ իշխող **«Քաղաքացիական պայմանագիր»** կուսակցության կողմից: **«Իրազեկ քաղաքացիների միավորումը»** հետևել է տարվա ընթացքում տեղի ունեցած հանրահավաքներին, անցկացրել հանրահավաքների մոնիթորինգ և մասնակիցների հաշվարկ՝ կանխելով հավաքների մասնակիցների քանակի շուրջ մանիպուլյացիաներն ու շահարկումները:

ՍԵՄԻՆԱՐ-ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ / ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

2023 թվականին ևս «Իրազեկ քաղաքացիների միավորումը» շարունակեց սեմինար-քննարկումներ կազմակերպել լրագրողների և կարծիքի առաջատարների համար՝ նպատակ ունենալով լրացնել տարբեր ոլորտների վերաբերյալ նրանց իրազեկվածությունը: Սեմինար-քննարկումների բանախոսները կոնկրետ ոլորտների պատասխանատուներ էին, որոնք տեղում, Chatham House ֆորմատով, անկաշկանդ մթնոլորտում ներկայացնում էին իրենց ոլորտներին առնչվող մանրամասներն ու պատասխանում մասնակիցների հարցերին:

Այսպես, տարեսկզբին Աղվերանում կայացավ «Իրազեկ քաղաքացիների միավորման»՝ «Արտաքին քաղաքականություն և լուսաբանում» շարքի 14-րդ սեմինար-քննարկումը: Միջոցառման հիմնական թեմատիկ ուղղությունը Լաչինի միջանցքի բացումն ու խաղաղության պայմանագրի կնքման շուրջ բանակցություններն էին: Բանախոսները մասնակիցներին ներկայացրին միջանցքի փակման հետևանքով ստեղծված իրավիճակը, դրա բացման շուրջ բանակցությունները, խաղաղության հաստատման գործընթացում զարգացումները, միջազգային ատյաններում ՀՀ կողմից և ՀՀ դեմ հարուցված հայցերի քննության որոշ մանրամասնություններ, պատասխանեցին մասնակիցների հարցերին

Ապրիլի 15-ին և 16-ին Ծաղկաձորում կայացավ «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ կողմից կազմակերպված՝ հակակոռուպցիոն բարեփոխումներին նվիրված սեմինար-քննարկումը: Բանախոսները մասնակիցներին ներկայացրին հակակոռուպցիոն բլոկի բարեփոխումների հետ կապված՝ իրականացված և դեռևս ընթացիկ փուլում գտնվող գործողությունները, դրանց իրականացման փուլում առաջացած դժվարությունները, ինչպես նաև հակակոռուպցիոն նոր ռազմավարության մշակման ընթացքը:

Մայիսի 27-28-ին Ծաղկաձորում կայացավ «Գնումների և հայտարարագրերի նոր համակարգերի ներդրումը» թեմայով սեմինար-թրեյնինգը, որին մասնակցեցին շուրջ 20 լրագրողներ և կարծիքի առաջատարներ, իսկ բանախոսների թվում էին ֆինանսների փոխնախարար Ավագ Ավանեսյանը և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահ Հայկուհի Հարությունյանը:

Հուլիսի 1-ին և 2-ին կայացավ «Արտաքին քաղաքականություն և լուսաբանում բանակցությունների հեռանկարները» խորագրով սեմինար-քննարկումը արտաքին քաղաքականության և լուսաբանման վերաբերյալ: Այս անգամ սեմինար-քննարկումը նվիրված էր արտաքին քաղաքական իրադրությանը, մասնավորապես՝ բանակցությունների հեռանկարներին: Միջոցառման ընթացքում ելույթներ ունեցան և բոլոր հուզող հարցերին պատասխանեցին Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար, ԵՄ դեսպան Ն.Գ. Անդրեա Վիկտորինը, ՀՀ անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը, ՀՀ ԱԺ փոխնախագահ, Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացում Հայաստանի հատուկ ներկայացուցիչ Ռուբեն Ռուբինյանը, Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարար Սերգեյ Ղազարյանը, ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Վահան Կոստանյանը, ՀՀ հատուկ հանձնարարություններով դեսպան Էդմոն Մարուքյանը, «Անվտանգային քաղաքականության հետազոտական կենտրոն» ՀԿ նախագահ, քաղաքագետ Արեգ Քոչինյանը:

Հուլիսի 22-ին և 23-ին Ծաղկաձորում կայացավ «Ոստիկանական բարեփոխումների խնդիրները, հաջողություններն ու ապագան» խորագրով սեմինար-քննարկումը՝ կազմակերպված «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ կողմից: Բանախոսները մասնակիցներին ներկայացրին Ներքին գործերի նախարարության ոլորտի բարեփոխումների հետ կապված՝ իրականացված և դեռևս ընթացիկ փուլում գտնվող գործողությունները, դրանց իրականացման փուլում առաջացած դժվարությունները, ինչպես նաև պատասխանեցին մասնակիցների բոլոր հարցերին: Հակիրճ ներկայացվեցին նաև «Քաղաքացիական հասարակությունը քեզ համար» ծրագիրը և դրա շրջանակներում իրականացվող «Չարաճճի պաշտոնյաներ» արշավը:

Նոյեմբերի 4-5-ին անցկացվեց «Արտաքին քաղաքականություն և լուսաբանում խաղաղության գործընթացն և արդի մարտահրավերներն ու հնարավորությունները» խորագրով սեմինար-քննարկումը, որի բանախոսներն էին ՀՀ ԱԺ փոխնախագահ, Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացում Հայաստանի հատուկ ներկայացուցիչ Ռուբեն Ռուբինյանը, ՀՀ ԱԺ պատգամավոր Մարիա Կարապետյանը, «ԱՆԻ» կենտրոնի փորձագետ Թաթուլ Հակոբյանը, «Անվտանգային քաղաքականության հետազոտական կենտրոն» ՀԿ նախագահ Արեգ Քոչինյանը, ինչպես նաև «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ ծրագրերի համակարգող Դանիել Իոաննիսյանը:

Դեկտեմբերի 9-10-ը Դիլիջանում տեղի ունեցավ «Ինչպես վերահսկել պետական գնումները» թեմայով սեմինար-թրեյնինգ՝ լրագրողների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համար: Միջոցառումը կազմակերպել էր «Իրազեկ քաղաքացիների միավորումը»՝ Միացյալ Թագավորության միջազգային զարգացման աջակցության շրջանակում ՄԹ կառավարության աջակցությամբ: Բանախոսները ներկայացրեցին Հայաստանում պետական գնումների համակարգի առանձնահատկությունները, առկա խնդիրները և համակարգի վերահսկման մեխանիզմները:

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

Տարվա ընթացքում «Իրազեկ քաղաքացիների միավորումը» Freedom House կազմակերպության աջակցությամբ իրականացվող «Հայաստանում ժողովրդավարական մշակույթի առաջմղում» ծրագրի շրջանակներում կազմակերպել է մի շարք բուհերի ուսանողների այցելությունները պետական մարմիններ՝ հանրային տարբեր ոլորտներում ընթացող բարեփոխումներին ծանոթացնելու նպատակով:

Փետրվարի 24-ին Սլավոնական համալսարանի ուսանողները հետևեցին Սահմանադրական բարեփոխումների խորհրդի և հանձնաժողովի համատեղ նիստին: Ուսանողները հնարավորություն ունեցան տեսնելու նիստի նախապատրաստական աշխատանքները, անմիջապես դահլիճից հետևելու նիստի ընթացքին, իսկ դրա ավարտից հետո խորհրդի և հանձնաժողովի որոշ անդամներ ուղիղ շփում ունեցան ուսանողների հետ՝ պատասխանելով նրանց հետաքրքրող հարցերին:

Մարտի 31-ին Երևանի պետական համալսարանի ուսանողները հանդիպեցին Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի հետ, ծանոթացան Հակակոռուպցիոն կոմիտեի կազմավորման և գործունեության հետ:

Ապրիլի 14-ին ուսանողների հերթական այցն էր կազմակերպվել ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե: Այս անգամ Կոմիտեն հյուրընկալել էր Հայաստանի եվրոպական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի ուսանողներին:
Մայիսի 19-ին կազմակերպվել էր ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոնի իրավագիտության ամբիոնի մագիստրանտների այցը ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե:

Մայիսի 19-ին կազմակերպվել էր ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոնի իրավագիտության ամբիոնի մագիստրանտների այցը ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե:
Հունիսի 30-ին կազմակերպվել էր Սլավոնական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի ուսանողների այցը ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե, որտեղ նրանք հնարավորություն էին ունեցել հանդիպելու և հարցեր ուղղելու կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանին:

Նոյեմբերի 8-ին կազմակերպվել էր Երևանի պետական համալսարանի իրավագիտության, քաղաքագիտության և հանրային կառավարման ֆակուլտետների ուսանողների այցը ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով: Ուսանողներին ողջունել էր հանձնաժողովի նախագահ Վահագն Հովակիմյանը՝ խոսելով հանձնաժողովի կազմավորման պատմությունից, ընտրություն կատարելու կարևորությունից, ազատ ընտրության հնարավորությունից:

Այցելություններ են կազմակերպվել նաև մարզային համալսարանների ուսանողների համար:

Մասնավորապես՝ ապրիլի 4-ին կազմակերպեց Վանաձորի պետական համալսարանի ուսանողների այցելությունը Սահմանադրական բարեփոխումների խորհրդի և հանձնաժողովի համատեղ նիստին:

Հոկտեմբերի 16-ին Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի ուսանողներն այցելեցին ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողով: Նրանց ողջունեց հանձնաժողովի նախագահ Վահագն Հովակիմյանը՝ խոսելով հանձնաժողովի աշխատանքների մշտական բնույթի, կադրային հոսքի խնդրի և այլ հարցերի մասին, ողջույնի խոսք ունեցավ հանձնաժողովի անդամ Արուսյակ Տերչանյանը:

Նոյեմբերի 21-ին կազմակերպվեց Վանաձորի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի ուսանողների այցը ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով: Ուսանողները ծանոթացան ԿԸՀ աշխատանքին և ընթացիկ բարեփոխումներին:

Դեկտեմբերի 8-ին կազմակերպեց տարվա ամփոփիչ ուսանողական այցը Հայաստանի եվրոպական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի 2-4-րդ կուրսերի ուսանողները հյուրընկալվեցին ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովում:

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

«Իրազեկ քաղաքացիների միավորումը» մարտի 3-ին կլոր սեղան-քննարկման ձևաչափով կազմակերպեց հանրային քննարկում՝ սոցիալ-տնտեսական իրավունքների սահմանադրական կարգավորումների վերաբերյալ: Միջոցառումը կազմակերպվել էր ԱլԳ ՔՀՖ Հայաստանի ազգային պլատֆորմի հետ համատեղ:

Տարեվերջին՝ դեկտեմբերի 1-ին, «Էլիտ պլազա» բիզնես կենտրոնում տեղի ունեցավ «Ոստիկանության դերը ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման գործում» հանրային քննարկումը և ֆեյսբուքյան «Չարաճճի պաշտոնյաներ» խմբի մրցանակակիրների պարգևատրման արարողությունը: Քննարկումն անցավ բուռն մթնոլորտում: Բանախոսները ներկայացրեցին ճանապարհային երթևեկության անվտանգության բարձրացման գործում իրենց առաջնահերթությունները, անդրադարձան ոստիկանության և պետական այլ կառույցների աշխատանքի խնդիրներին, ինչպես նաև պատասխանեցին քննարկման մասնակիցների և լրատվամիջոցների ներկայացուցիչների բազմաթիվ հարցերին:

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՖՈՐՈՒՄ

«Իրազեկ քաղաքացիների միավորումը՝ Freedom House միջազգային իրավապաշտպան կազմակերպության հետ համագործակցությամբ, 2022 թվականից ամեն տարի կազմակերպում է Ժողովրդավարության հայկական ֆորումը, որին մասնակցում են Հայաստանի Հանրապետության բարձրաստիճան պետական այրերը, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, դիվանագետներ, զանգվածային լրատվամիջոցների և փորձագիտական դաշտի ներկայացուցիչներ:

Մայիսի 31-ին Երևանում կայացավ Freedom House միջազգային իրավապաշտպան կազմակերպության և «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ի կազմակերպած Ժողովրդավարության հայկական արդեն երկրորդ ֆորումը, որի քննարկումներին մասնակցեցին ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը, վարչապետ Նիկոլ Փաշինյանը, Freedom House-ի նախագահ Մայքլ Աբրամովիցը, Հայաստանում Եվրոպական միության գրասենյակի ղեկավար, դեսպան Անդրեա Վիկտորինը, ՄԻՊ Անահիտ Մանասյանը, ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը, Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանը, ինչպես նաև Հայաստանի գործադիր ու օրենսդիր իշխանությունների, դիվանագիտական կորպուսի, քաղաքացիական հասարակության այլ ներկայացուցիչներ ու ԶԼՄ-եր ներկայացնող շուրջ 190 լրագրողներ:



Պանելային քննարկումներից առաջինի ժամանակ վարչապետ Նիկոլ Փաշինյանը և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ քննարկեցին Հայաստանի առջև ծառացած ժողովրդավարական խնդիրները, անդրադարձան երկրի անվտանգային խնդիրներին:

Պանելային քննարկումներից հաջորդը նվիրված էր մարդու իրավունքներին, որին մասնակցում էր ՄԻՊ Անահիտ Մինասյանը, ՀՀ-ում ԵՄ դեսպան Անդրեա Վիկտորինը և այլ բանախոսներ:

Հաջորդ պանելը վերաբերում էր հակակոռուպցիոն բարեփոխումներին, որտեղ ներկայացվեցին Հակակոռուպցիոն կոմիտեի կայացմանը վերաբերող հարցեր, ինչպես նաև այս ոլորտի ընթացիկ գործողությունները:

Վերջին զուգահեռ պանելային քննարկումը նվիրված էր ապատեղեկատվության դեմ պայքարին և լրատվամիջոցներին վերաբերող պետական քաղաքականությանը:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԾՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

2023 թ. մարտի 26-ին Կազմակերպությունը «Անկախ դիտորդ» դիտորդական դաշինքի (այսուհետև՝ Դաշինք) կազմում իրականացրել է դիտորդական առաքելություն Սյունիքի մարզի Սիսիան և Ծիրակի մարզի Անի համայնքներում:

Կազմակերպությունը Դաշինքի կազմում նաև երկարաժամկետ և կարճաժամկետ դիտորդություն է իրականացրել 2023 թ. սեպտեմբերի 17-ին տեղի ունեցած Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ և հանդես է եկել ճեպազրույցներով, ինչպես նաև դիտարկել վերահաշվակների գործընթացները:

Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ առաքելությունը բարձրաձայնել է մի շարք խախտումների մասին, մասնավորապես, գործընկերների և «Փաստերի ստուգման հարթակի» միջոցով հրապարակվել էին լրագրողական քննության արդյունքներ՝ այն մասին, որ ձայների հավաքագրման նպատակով վարչական ռեսուրս էր օգտագործվում (նույն խնդրի մասին ավելի ուշ հրապարակում է արել նաև Freedom House իրավապաշտպան կազմակերպությունը): Այդ կապակցությամբ ՔՊ կուսակցությունը հայց է ներկայացրել դատարան ընդդեմ Կազմակերպության՝ ներկայացվածը որակելով զրպարտություն: Սրա վերաբերյալ դատապարտող հայտարարությամբ է հանդես եկել լրագրողական համայնքը: Միաժամանակ, կազմակերպության միջոցների վրա կալանք է դրվել հայցագնի՝ 1 մլն ՀՀ դրամի չափով: Կազմակերպությունը դիմել է դատարան՝ խնդրելով հանել հայցի ապահովումը, քանի որ դրանով լրջորեն խոչընդոտվել է Կազմակերպության գործունեությունը, ներկայացվել են բազմաթիվ հիմնավորումներ: Հայցվոր կողմը, ներկայանալով դատարան, ևս միջնորդել է հանել իր իսկ միջնորդությամբ կիրառված ապահովումը: Արդյունքում հայցի ապահովումը Կազմակերպության հաշիվներից հանվել է: Առաջին ատյանի դատարանը մասնակիորեն բավարարել է ՔՊ հայցը, և այդ մասով Կազմակերպությունը բողոքարկել է դատական ակտը: Վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ, այս պահին ընթանում է քննություն:

ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՒՄ

2023 թ նոյեմբերի 24-ին տեղի ունեցավ Միացյալ Թագավորության միջազգային զարգացման աջակցության շրջանակում ՄԹ կառավարության աջակցությամբ իրականացվող «Պետական գնումների հանրային վերահսկողության և հաշվետվողականության խթանում» ծրագրի պաշտոնական մեկնարկը:

Ծրագիրը միտված է Հայաստանի Հանրապետությունում պետական գնումների համակարգի նկատմամբ հանրային վերահսկողության ուժեղացմանը և պետական գնումների թափանցիկության և հաշվետվողականության խթանմանը:

Ծրագրի իրականացման սկզբնական փուլում արդեն իսկ բացահայտվել են մի շարք խնդիրներ և թերություններ, որոնց շտկման և փոփոխության մասով պաշտոնական պարզաբանումներ և առաջարկություններ են փոխանցվել Ֆինանսների նախարարությանը:

Ծրագրի շնորհիվ արդեն իսկ պատրաստվել են գնումների ոլորտը կարգավորող կառավարության որոշման փոփոխություններ, որոնք առաջիկայում կներկայացվեն կառավարության հաստատմանը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2023 թվականին Կազմակերպությունը հանդես եկավ մի շարք հայտարարություններով: Մասնավորապես, քաղհասարակության այլ ներկայացուցիչների հետ համատեղ, միջազգային գործընկերներից պահանջեցինք խստորեն և անվերապահորեն դատապարտել մարտի 5-ին Ադրբեջանի ԶՈՒ կողմից Արցախի ՆԳՆ անձնագրային և վիզաների վարչության երեք ծառայողների սպանությունը:

Քաղհասարակությունը նաև անհանգստություն հայտնեց ԵՄ նախագահ Ծառլ Միշելի՝ հուլիսի 15-ին վարչապետ Փաշինյանի և նախագահ Ալիևի հետ վերջին եռակողմ հանդիպումից հետո արված մամուլի հայտարարության վերաբերյալ: Մասնավորապես, քաղհասարակությունը մտահոգված էր, որ հայտարարությունը նույնացնում էր Լաչինի միջանցքը և Աղդամը՝ որպես ներկայիս հումանիտար ճգնաժամի լուծման տարբերակներ:

Քաղհասարակությունը նաև մտահոգություն հայտնեց քաղաքական մանիպուլյացիաներով զբաղված ադրբեջանցի «բնապահպանների» դիրքորոշման վերաբերյալ, ինչը հանգեցնում էր ռազմական ագրեսիայի ուժեղացմանը Հարավային Կովկասի տարածաշրջանում և կանխում հայ-ադրբեջանական ռազմական հակամարտության խաղաղ կարգավորումը, վատթարացնում սոցիալ-էկոլոգիական վիճակը սահմանամերձ շրջաններում:

Հուլիսի 24-ին քաղաքացիական հասարակության մի խումբ կազմակերպություններ կոչով դիմեցին ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Անտոնիու Գուտերեշին՝ պահանջելով շտապ քայլեր ձեռնարկել՝ պայմանավորված Լեռնային Ղարաբաղում Լաչինի միջանցքի ամբողջական շրջափակման հետևանքով մարդու իրավունքների շուրջ ստեղծված արտակարգ իրավիճակով:

Հայաստանի կառավարության խնդրանքով գումարվելիք ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի նիստի կապակցությամբ Հայաստանում քաղաքացիական հասարակության ակտիվ կազմակերպությունների, այդ թվում «Իրազեկ քաղաքացիների միավորման» ներկայացուցիչները կրկին դիմեցին Անվտանգության խորհրդի անդամ պետություններին՝ պարտավորություն ստանձնել պաշտպանելու հայ ժողովրդին Լեռնային Ղարաբաղում Ադրբեջանի կողմից կազմակերպված ցեղասպանությունից և էթնիկ զտումներից:

ԱԼԳ ՔՀՖ Հայաստանի ազգային պլատֆորմը նույնպես կոչ արեց ՄԱԿ Անվտանգության խորհրդին՝ կանխելու նոր Հայոց ցեղասպանությունը՝ միջազգային խաղաղարար ուժեր մտցնելով Լեռնային Ղարաբաղ և ճանաչելով այն որպես ՄԱԿ-ի ենթամանդատային տարածք:

Կազմակերպության ծրագրերի համակարգող Դանիել Իոաննիսյանը սեպտեմբերի 12-ին Բրյուսելում կայացած ԵՄ-Հայաստան քաղհասարակության պլատֆորմի նիստին հանդես եկավ ելույթով՝ անդրադառնալով Լաչինի միջանցքի հարցին և նիստի մասնակիցների ուշադրությունը հրավիրելով Ադրբեջանի հայատյաց քաղաքականության վրա:

Արևելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության ֆորումի ղեկավար կոմիտեի անդամները խստորեն դատապարտեցին ադրբեջանական զինված ուժերի կողմից Լեռնային Ղարաբաղի ժողովրդի դեմ «հակաահաբեկչական գործողության» անվան տակ սանձազերծված հարձակումը, որը խլեց բազմաթիվ անմեղ կյանքեր և առաջ բերեց զանգվածային ավերածություններ:

Կազմակերպության ծրագրերի համակարգող Դանիել Իոաննիսյանը ելույթով հանդես եկավ ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի Մարդկային չափողականությունների կոնֆերանսին՝ արձագանքելով ադրբեջանցի պատվիրակին և անդրադառնալով Ադրբեջանի հայատյացությանը:

ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Կազմակերպությունը 2023 թ.սկզբին դադարեցրեց իր գործունեությունը ոստիկանության բարեփոխումների համակարգող խորհրդի կազմում, ինչի վերաբերյալ խորհրդի անդամ հանդիսացող ՀԿ-ների հետ համատեղ հանդես եկավ հայտարարությամբ, որը կապված էր բարեփոխումների գործընթացներում և ոստիկանական համակարգում մի շարք խնդիրների հետ:

2023 թ. ողջ ընթացքում Կազմակերպությունը հանդես է եկել 25-ից ավելի հրապարակումներով, որոնցում նշվում էին ոստիկանության բարեփոխումների խնդիրները և հնարավոր լուծումները: Մասնավորապես, հրապարակումները վերաբերում էին Պարեկային ծառայությանը, ոստիկանական բաժիններում դաժան վերաբերմունքին, թմրանյութերի դեմ պայքարին, ոստիկանական զորքերին և այլ կարևոր հարցերի:

Կազմակերպությունը գործընկեր կազմակերպությունների հետ համատեղ նաև հանդես է եկել ոստիկանությունում տեղի ունեցող բռնությունների վերաբերյալ հայտարարությամբ:

Ոստիկանության բարձրաստիճան ներկայացուցիչների մասնակցությամբ կազմակերպվել էր սեմինար քննարկում «Ոստիկանական բարեփոխումների խնդիրները, հաջողություններն ու ապագան» խորագրով, որին մասնակցում էին լրագրողներ: Բացի սա, ոլորտի փորձագետների և Ազգային Ժողովի պատգամավորների մասնակցությամբ կազմակերպվել էր հանրային քննարկում «Ոստիկանության դերը ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման գործում» թեմայով:

Կազմակերպությունը, որպես բանախոս, մասնակցեց Հայաստան-Եվրամիություն քաղաքացիական հասարակության պլատֆորմի նիստին, որի ընթացքում ներկայացվեց նաև «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ կողմից կազմված՝ «Ոստիկանության բարեփոխումների ընթացքը» զեկույցը:
Տարվա ընթացքում Կազմակերպությունը 6 հայցադիմում է ներկայացրել ընդդեմ ՆԳՆ-ի:
Կազմակերպության կողմից իրականացվել է ծավալուն հետազոտություն իրավապահների հետ քաղաքացիների փոխգործակցության խոչընդոտների վերաբերյալ, և կատարվել են համապատասխան առաջարկություններ:

2023 թ.-ին Կազմակերպության ներկայացուցիչ Դանիել Իոաննիսյանը ընդգրկվել է ոստիկանության ծառայողների ատեստավորման հանձնաժողովի կազմում, որի շրջանակներում մասնակցել է ատեստավորման գործընթացի: Կազմակերպության ներկայացուցիչը դիմել է իրավապահ մարմիններին՝ ատեստավորման ներկայացուցիչներից մեկի ենթադրյալ ապօրինի հարստացման հարցով:

Կազմակերպությունն ընդգրկվել է ՆԳ նախարարության քաղաքացիական ծառայության պաշտոններում թեկնածուների հետ հարցազրույց անցկացնելու նպատակով կազմված հանձնաժողովներում:

Կազմակերպությունը, հանդիսանալով Ազգային ժողովի Պաշտպանության և անվտանգության հանձնաժողովին կից ստեղծված «Անվտանգության ոլորտի ժողովրդավարական վերահսկողության ազգային հարթակի» անդամ, գործընկեր Կազմակերպության հետ համատեղ առաջարկություններ է արել, որոնք ներառվել են հանձնաժողովի օրակարգում:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ

Կազմակերպությունը շարունակում է հանդիսանալ Սահմանադրական բարեփոխումների խորհրդի անդամ, որի շրջանակներում 2023 թ-ին ներկայացրել է 3 սահմանադրական հայեցակարգի առաջարկություն, որոնք վերաբերում էին ուղիղ ժողովրդավարության սահմանադրական գործիքներին, հանրաքվեներին, վերպետական կառույցների անդամակցության հարցերին, կայուն մեծամասնության սկզբունքից հրաժարմանը, Սահմանադրությամբ համացանցի չեզոքության սկզբունքի ամրագրմանը: Կազմակերպությունը նաև հանդես է եկել սահմանադրական գործընթացների հետ կապված հարցազրույցներով և հրապարակումներով:

Կազմակերպությունը 2023 թ-ին սահմանադրական գործընթացների վերաբերյալ կազմակերպել է նաև կլոր սեղան-քննարկում, որին մասնակցում էին ինչպես օրենսդիր մարմնի, այնպես էլ կառավարության, Սահմանադրական դատարանի, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ և ոլորտում մասնագիտացած իրավագետներ:

2023 թ-ին Կազմակերպությունը հնարավորություն ստեղծեց Սլավոնական, Վանաձորի պետական համալսարանների ուսանողներին դիտորդի կարգավիճակով ներկա գտնվել Սահմանադրական բարեփոխումների խորհրդի նիստերին և նիստերի վերջում հարցեր ուղղել խորհրդի անդամներին:

ԸՆՏՐԱԿԱՆ

2023 թ.-ին Կազմակերպությունն «Անկախ դիտորդ» դաշինքի շրջանակներում երկարաժամկետ և շրջիկ դիտորդական առաքելություն է իրականացրել Երևան քաղաքի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ:

Նախընտրական շրջանում «Անկախ դիտորդ» դաշինքը հանդես եկավ «Փաստերի ստուգման հարթակի» հետ համատեղ կատարված հետաքննությամբ, որում ձայնագրություններով ի ցույց էր դրվել այն, որ մայրաքաղաքից դուրս մի շարք համայնքային ծառայողներ Երևանում կայանալիք տեղական ընտրություններում իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության համար ընտրողների ցուցակագրումներ են իրականացնում: Սրա հետ կապված «Քաղաքացիական պայմանագիրը» դատական հայց ներկայացրեց «Անկախ դիտորդ» դաշինքի անդամ հանդիսացող «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ի դեմ: Հայցը քննադատող հայտարարություններով հանդես եկան մի շարք կազմակերպություններ: Այս պահին առաջին ատյանի դատարանը մասնակի բավարարել է կուսակցության հայտն ընդդեմ Կազմակերպության, վճռի վերաբերյալ կազմակերպությունը ներկայացնելու է վերաքննիչ բողոք:

Կազմակերպության ներկայացուցիչները հանդես են եկել ընտրությունների վերաբերյալ մի շարք հարցազրույցներով և հրապարակումներով՝ մասնավորապես, անդրադառնալով վարչական ռեսուրսի կիրառման, Հանրային հեռուստաընկերության ցուցաբերած վարքի և մի շարք այլ հարցերի:

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
Քաղաքացիական հասարակության ֆորումի
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԼԱՏՖՈՐՄ

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ

Հակակոռուպցիոն կոմիտեի ստեղծման պահից ի վեր մենք մասնակցում ենք այդ մարմնի քննիչների և օպեր-լիազորների նշանակման պրոցեսին (ընդունող հանձնաժողովի անդամ՝ Ռուզաննա Ավագիմյան), ինչը շարունակվել է նաև 2023 թ. ընթացքում: Միաժամանակ, ԻՔՄ ներկայացուցիչը հանդիսանում է Հակակոռուպցիոն դատարաններում դատավորների թեկնածուների նախնական հարցազրույցի ազգային փորձագետ (Արտաշես Սերգոյան), որի սահմաններում անհատական հարցազրույցներ են իրականացվում դատավորի թեկնածուների հավակնորդների հետ և փորձագետի կողմից կազմվում է խորհրդատվական եզրակացություն:

2023 թ. ընթացքում ԻՔՄ-ն նաև մի շարք հետազոտություններով ուսումնասիրել է իրավապահների հետ քաղաքացիների համագործակցության խոչընդոտները և մշակել դրանց լուծմանն ուղղված առաջարկներ, որոնք ներկայացվել են ՀՀ հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդ:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ, 2023

N	2023 թ. ֆինանսական միջոցները՝ ըստ դոնորների		USD
1	Ազատության տուն, Վաշինգտոն	Բալանս	6 620
		Եկամուտ	29 039
2	Պրահայի քաղաքացիական հասարակության կենտրոն, Պրահա	Բալանս	3 929
		Եկամուտ	0
3	Ժողովրդավարության ազգային հիմնադրամ, Վաշինգտոն	Բալանս	32 087
		Եկամուտ	171 750
4	Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան, Երևան	Բալանս	48 377
		Եկամուտ	0
5	Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան, Երևան	Բալանս	3 300
		Եկամուտ	6 497
6	Ժողովրդավարության զարգացման հիմնադրամ, Երևան	Բալանս	3 300
		Եկամուտ	6 497
7	Ժողովրդավարության զարգացման հիմնադրամ, Երևան	Բալանս	3 444
		Եկամուտ	40 030
8	Միացյալ Թագավորության կառավարություն, Լոնդոն	Բալանս	0
		Եկամուտ	74 559
9	Հայաստանում ԱՄՆ դեսպանություն, Երևան	Բալանս	0
		Եկամուտ	7 300
			436 730

N	2023 թ. ծախսերը՝ ըստ իրականացված ծրագրերի		USD
1	Հայաստանում ժողովրդավարական մշակույթի առաջմղում	Ծախսեր	**49 355**
2	Փաստահեն տեղեկատվության խթանում՝ լրագրողական հետաքննությունների միջոցով	Ծախսեր	**3 929**
3	Արտաքին քաղաքականության և ժողովրդավարական բարեփոխումների շուրջ հանրային քննարկումների խթանում	Ծախսեր	**180 945**
4	Հանրային նշանակության հարցերի փաստահեն ընկալման զարգացում՝ ապատեղեկատվություններին և մանիպուլյացիաներին հակազդելու միջոցով	Ծախսեր	**51 798**
5	Ժողովրդավարության խթանումը երիտասարդության շրջանում՝ ԻՔՄ-ի առցանց տեսանելիությունը մեծացնելու միջոցով	Ծախսեր	**3 324**
6	«Իրավահավասար քաղաքացի» հանրային արշավ	Ծախսեր	**6 445**
7	Ապատեղեկատվության դեմ պայքար՝ ժողովրդավարական բարեփոխումների, մարդու իրավունքների և հանրային մասնակցության ոլորտներում	Ծախսեր	**39 021**
8	Պետական գնումների հանրային վերահսկողության և հաշվետվողականության խթանում	Ծախսեր	**34 503**
9	Պայքար կոռուպցիայի և մարդու իրավունքների խախտումների դեմ՝ քաղաքացիների ներգրավման միջոցով	Ծախսեր	**5 914**
			375 234